

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մարտ ամսին «Մշակ» լրագիրը իւր սովորական սխա-
գործութիւններէց մէկը նորից երևան հանեց, որ առիթ տուեց
Բագուի տեղական «Бакинскія извѣстія» և «Каспій» թեր-
թերին «Մշակի» վարմունքը յնախանձառ, ղստոր և կեղտոտ-
անուանել: Խնդիրը նրանումն է, որ մեր նորագոյն գրականու-
թեան տաղանդաւոր վաստակաւորներէց մէկը—պ. Շիրվանզա-
դէն կամենում է իւր հեղինակութիւններէ ժողովածուն հրա-
տարակել, ուստի և յայտարարութիւններ էր սւղարկել տպագ-
րելու ի միջի ուրիշ թերթերի և «Մշակ»-ին: Նրկար տարիների
ընթացքում անզուսպ հայհոյականութիւնը դաւանութիւն դար-
ձրած այդ թերթը, որ մեր թշուառ ազգի գլխին մի կատա-
րեալ պատուհաս կարծես լինի ստեղծուած, մերժեց տպագրե-
լու հայ հեղինակի գրքերի յայտարարութիւնը: Նրբոր սակայն
Շիրվանզադէն մի նամակով հրապարակ հանեց «Մշակի» տգեղ
վարմունքը՝ այդ սուտ ազատամիտ թերթի խմբագրութիւնը
սկսեց արդարանալ զանազան անհիմն և ծիծաղելի պատճառա-
բանութիւններով, որոնք և օտար թերթերը անսւանցին «Низ-
менно, пошло» և ուրիշ այս տեսակ քաղցրաւէնիքներով յետ
դարձրին «Մշակ»-ին (Бакинск. извѣст. № 69 և «Каспій»:
Այդ պատճառաբանութիւնների էութիւնը նրանումն է, որ
պ. Շիրվանզադէն մի ժամանակ բարեկամ է եղել «Մշակի»
նախկին խմբագիր հանգուցեալ Գր. Արծրունուն, որին սակայն
յետոյ հայհոյել է, որ նորից հաշտուել է նրա յօքելեանի ժա-
մանակ, բայց դարձեալ կռուել է և որ չարունակում է «Մշա-
կի» դէմ իբր թէ կեղծ անուաններով յօդուածներ գրել: Այս
պատճառաբանութիւնները այնքան մանկական են և ծիծաղելի,
որ ոչ մի թերթ պաշտպան չհանդիսացաւ «Մշակի» տեսակէ-

տին, այլ ընդհակառակը Պ. Բուրգի ուսանողութիւնից մի քանիսը շատ կծու և խիստ լեզուով այս դէպքից մի փոքր դեռառաջ շեշտեցին այդ լրագրի սրագաբար անկումը:

Սակայն հետաքրքրականը այս խնդրում հետևեալ հանգամանքներն են: Արդեօք իրաւունք ունի որևէ թերթ, այն էլ ինքն իրան ազատամիտ յորջորջող թերթ, յայտարարութիւնների բաժնում ուղղութեան հարց լուծելու, եթէ իրաւ «Մշակը» սկզբունքով չտպագրեց պ. Շիրվանզադէի գրքերի յայտարարութիւնը: Ինչ խօսք, որ ամեն մի բանիմաց մարդ կասի, որ ծիծաղելի է ասել թէ հայ հեղինակի յայտարարութիւնը չի կարող արժանանալ մի ատամնաբոյժի կամ դաշնամուրի խանութպանի յայտարարութիւնների հետ տպագրուելու: Սա արսուրտ է: Նրկրորդ «Մշակը» այստեղ էլ սուտ է ասում, որովհետև նոյն «Մշակը» Շիրվանզադէի բոլոր կոիւններից և յօդուածներից յետոյ էլ նոյն հեղինակի գրքերի յայտարարութիւնը տպագրել է, ուրեմն սկզբունքի խնդիր այստեղ չկայ և չի կարող լինել, որովհետև «Մշակի» այս վարմունքի մէջ հետևողականութիւն չկայ: Այժմ դառնանք այն խնդրին թէ Շիրվանզադէն փոփոխական է եղել իւր յարաբերութեանց մէջ դէպի «Մշակը» և որ նա կեղծ անուններով յօդուածներ է գրում «Մշակի» դէմ, որի իւր նմուշը պ. Լէօն «Бахы» լրագրի № 65-ում բերում է «Լուսնայ» հանդիսից Համբարձում Առաքելեանի մասին գրուած յօդուածից: Որ մարդկանց յարաբերութիւնները և հայեացքները կարող են փոփոխուել՝ սրա ամենափայլուն ապացոյցը տուել է «Մշակի» աղանդի հիմնադիր հանգուցեալ Արծրունին, որ ներսէս պատրիարքի և նոյն իսկ գ. Արիստակէս ա. եպիսկոպոս Սեդրակեանի մասին մի քանի անգամ հակառական բաՆեր է տպագրել և միշտ արդարացել է նրանով, որ ինքը միայն ասում է այն, ինչ որ տեսնում է: Ինչո՞ւ «Մշակը» նոյն իրաւունքը ուրիշներից կամենում է խլել: Էլ չենք կրկնում, որ այս բոլորը յայտարարութեան հետ ոչ մի կապ չունի: Բացի այս Շիրվանզադէի ստորագրութիւնը չպիտի լինի հետաքրքրականը «Մշակի» համար, այլ գրուածքի բովանդակութիւնը, որի դէմ, «Մշակը» կարող է թէկուզ Վրձինի անմահ երգիծական գրչով պատասխանել և ոչ թէ վրէժխնդիր լինել կողմնակի կերպով: Այստեղ էլ «Մշակը» խաւարամիտ է և նեղսիրտ, որովհետև ոչ մի օտար գրականութեան մէջ այսպիսի հարց չէ կարող ծագել: Դուք գրեցէք յօդուածի բովանդակութեան դէմ և ոչ

ստորագրութիւն փնտռեցէ՛ք: Իսկ ինչ վերաբերում է Ղումայ՝
 ից բերած կտորին՝ մենք նախ հարկաւոր ենք համարում ասե-
 լու, որ այդ յօդուածը պ. Շիրվանզադէի գրածը չէ և երկրորդ
 այդ յօդուածը շատ դուրեկան պիտի լինէր Պշակին՝, որ այս-
 պիսի գէպըներում միշտ ասում է թէ՛ նա հասարակական արաս-
 ներն է մտրակում: Մենք էլ մի արդարացի քարաքտերիստիկա
 էինք տուել մի պոռոտախօս գրչակի, որ մի ժամանակ կամե-
 նում էր նշանաւոր Բոկլին փառքից դցելու և Պշայոց կուլտու-
 րայի՝ պատմութիւն էր իբր թէ սկսել գրել և յետոյ հազար ու
 մի տեսակ մասխարութիւններ անելուց յետոյ՝ կամեցաւ դիպ-
 չել և մեր հանդիսին: Մենք միայն հրաւիրեցինք այդ պարոնին
 փաստեր բերել իւր վայրահաչութիւնների ապացուցման համար:
 Վերջապէս պէտք է պոռոտախօսութեանը սահման լինի թէ ոչ:
 Բայց Պշակի՝ խաւարամտութեան իսկական ապացոյցները այն
 կէտերն են, որոց դէմ Պշակը՝ չի համարձակուի պատասխա-
 նելու, որովհետեւ ոչինչ չի կարող պատասխանել Պշակը՝ իւր
 № 56 պատասխանելով „Вакинскія извѣстія“ լրագրին՝ նախ
 թոյլ է տալիս գրելու թէ Պղանդաւորական նեղարտութիւնը
 գնալով բորբոքւում է՝ և երկրորդ այդ լրագրին յաճախ մարկ-
 սիստների օրգան է անուանում: Այստեղ մի մեծ յե՛կ կայ,
 որ կարօտ է բացատրութեան: Ինչո՞ւ համար է Պշակը՝ ա-
 ղանդաւոր անուանում „Вакинскія извѣстія“ լրագիրը: Ի՞նչ
 կապ կայ Պղանդաւոր՝ խօսքի և այդ լրագրի մէջ, ինչո՞ւմն
 է կայանում աղանդաւորութիւնը և ո՞ւմ հասցէին են ասուած
 այս խօսքերը: „Вакинскія извѣстія“ թերթը ազատամիտ լայն
 ծրագրով հրատարակուող մի լրագիր է (թէ և Ղումայի՝ մասին
 սխալեցրած է խամախոհներից), ուրեմն ինչ աղանդաւորու-
 թեան մասին խօսք կարող է լինել: Եթէ Պշակը՝ բաւարար
 բացատրութիւն չկարողանայ տալ այս հարցերին՝ մնում է մի
 ճշմարիտ ենթադրութիւն թէ Պշակը՝ իւր այդ խօսքերով կա-
 մենում էր ասել, որ „Вакинскія извѣстія“ լրագրի խմբագրու-
 թեան մօտիկ մարդիկները ոչ լուսաւորչական հայեր են: Ահա
 թէ ո՞ւմ է վերաբերում այդ խօսքերը: Եւ վայ մեզ, Մենք վա-
 ղուց գիտէինք, որ այդ Պշակի՝ ղեկավարները, ֆրազեօրներ
 են, որ նրանց ազատամտութիւնն էլ, ազնւութիւնն էլ, մար-
 դասիրութիւնն էլ ֆրազներ են և երբոր նրանց սխալները ցոյց
 տուող լինի՝ նրանք ամենայետադէմ և ամենաանմաքուր մի-
 ջոցներով պիտի կռուեն, բայց չէինք կարծում, որ տասնեակ

տարիներ «առանց կրօնի խտրութեան» ֆրագներ գողացող թերթը հակառակորդի կրօնական դաւանանքը մեղադրական կէտ կը շինի։ Այլ բացատրութիւն չէ կարելի տալ, որովհետեւ ովքեր են «Ваканскія извѣстія» լրագրի «աղանդաւորները»։ — Մենք այնտեղ աղանդաւորներ չենք գտնում։ Իսկական խմբագիրը ռուս է, իսկ մօտիկ մարդիկ այլակրօն, բայց իսկական հայեր և գուցէ «Մշակի» խմբագրատան մէջ բնակալած գրականական «համբալից» էլ մաքուր հայեր։

Նոյնպէս ուշագրութեան արժանի է, որ «Մշակը» գլուխ կորցրած իւր յօդուածներում անուանում է իւր հակառակորդ թերթը «մարկսիստներ» օրգան։ Ի՞նչ կապ ունի քննելի խնդիրը, յայտարարութիւն չտպագրելը Մարկսի հետ։ Սա արդէն մի խայտառակ և դիտաւորեալ ակնարկութիւն է, որովհետեւ ոչինչ կապ չկայ բուն խնդրի և այն հարցի մէջ թէ ո՞ւմ օրգանն է «Ваканскія извѣстія» թերթը։ Չէ, «Մշակի» արատները բացւում են և «Մշակի» իսկական տէրերը ուրախանալու չեն, երբոր թերթը իրանց ձեռքը կանցնի։ Իսկ եթէ, ընթերցող, կամենում ես իմանալ թէ ինչո՞ւ «Մշակը» չտպագրեց պ. Շիրվանզադէի գրքերի յայտարարութիւնը՝ պէտք է հարցնես «Մշակի» խմբագրատան գրականական համալին, որ ինքն էլ մի ժամանակ յաւակնութիւն ունէր վիպասան դառնալու։ Նա երևի կիսոստովանի, որ նրան լաւ են հասկացել Բազուի թերթերը՝ նկատելով, որ նախանձը, հայի դարևոր նախանձը և թշնամուն նիւթական վնաս հասցնելու անյագ ձգտումն է եղել այդ տգեղ վարմունքի շարժառիթը։